

Կ. Մ. ՄՈՒՐԱՂՅԱՆ

Հոկտեմբերի 8-ին կյանքից անժամանակ հեռացավ հայ թարգմանական գրականության անխնայ հետազոտող, անվանի տեքստաբան-ընթերցող, բանասիրական գիտությունների դոկտոր Կիմ Մամբրեի Մուրադյանը:



Կ. Մուրադյանը ծնվել է 1938 թ. դեկտեմբերի 14-ին, Վրաստանի Հանրապետության Ախալ-քալակի շրջանի Ղազուլար գյուղում: Ծրեանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը 1965 թ. ավարտելուց հետո, 1966—1968 թթ. սովորել է ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում: Ասպիրանտական ուսումնառության տարիներին պրոֆ. իմ. Մարգարյանի ղեկավարությամբ նա մասնագիտացել է հայ միջնադարյան թարգմանական գրականության բնագավառում: Այդ տարիներից էլ Կ. Մուրադյանը իրեն անմնացորդ նվիրել է վաղ բյուզանդական մատենագրության ամենակարկառուն դեմքերից «Երեք մեծ կապադոկացիների»՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու երկերի հայերեն թարգմանությունների համակողմանի հետազոտությանը:

Կ. Մուրադյանը 1970 թ. թեկնածուական դիսերտացիա է պաշտպանել՝ «Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցաւրեան» հայ մատենագրության մեջ» թեմայով: Բարսեղ Կեսարացու կյանքին, գործունեությանը և մատենագրական ժառանգությանը գիտնականը անդրադարձել է նաև հետազգում, 1976 թ. լույս տեսավ Կ. Մուրադյանի «Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցորեան» հայ մատենագրության մեջ» ուսումնասիրությունը, իսկ 1984 թ. նրա աշխատասիրությամբ հրատարակվեց «Վեցաւրեան» հայերեն թարգմանական բնագիրը:

Կ. Մուրադյանը 1970—1978 թթ. աշխատել է ԳԱՊՀ Վրասեր հասարակական գիտությունների ամսագրի խմբագրությունում: 1973—1978 թթ. նա ամսագրի պատասխանատու քարտուղարն էր: Իր բարեխղճության, սկզբունքայնության, գիտական-խմբագրական կարողությունների շնորհիվ նա վաստակել էր ինչպես ամսագրի աշխատակիցների, այնպես էլ հոգվածագիր հեղինակների խոր հարգանքը:

4. Մուրադյանը 1978 թ. աշխատանքի է անցնում ԳԱ Արևելագիտության ինստիտուտում, իրեն ավագ դիտաշխատող, գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ գիտնականության աշխատության համար 1985 թ. նրան շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1986 թվականի դեկտեմբերից մինչև կյանքի վերջին օրը Կ. Մուրադյանը առաջատար գիտաշխատող էր ԳԱ Արևելագիտության ինստիտուտի կովկասագիտության և բյուզանդագիտության բաժնում:

Բացառիկ ամբողջական և նպատակային է եղել Կիմ Մուրադյան-հետազոտողի գիտական գործունեությունը: Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նտղիանզացու և Գրիգոր Նյուսացու (վերջինիս նվիրված մենագրությունը հրատարակության գործընթացում է) դրական վաստակն արժեքավորելիս հետազոտողը նախ հանգամանորեն լուսաբանել է վաղ քրիստոնեական եկեղեցու այդ նշանավոր գործիչների կենսագրությունները, հայոց հետ նրանց առնչությունները, ներկայացրել հայկական միջավայրում բյուզանդական մատենագիրների եռասուներորդյանը տրված զննատաճկները: Տպավորելն այն է, որ այդ ամենն իրականացվել է ահռելի թվով ձևագիր աղբյուրների առկուռումով, արժարժվող խնդիրներին վերաբերող ամենափոքր իսկ հիշատակագրությունների արձանագրումով: Ձևագիր մատյանների հետազոտությունը Կ. Մուրադյանի տարեքան էր, նրա առանձնահատուկ սիրո առարկան: Ինքնամոռաց նվիրում էր պահանջում հիշյալ մատենագիրների հոգևոր ժառանգությունը կազմող տարաբնույթ երկերի հայացման պատմության վերհանումը, հայոց մեջ այդ ստեղծագործությունների գործառության ընթացքի և բնդրկման պարզարանումը, թարգմանական հուշարձանների ազդայնացման հետազոտումը: Այս ամենն այնքան փաստարկված ու համոզելի է կատարված, որ միանգամայն օրինալափ է հնչում հանգուցյալ գիտնականի թաղային թարգմանական գրականությունն բնորոշումը:

4. Մուրադյանն անհատականություն էր, որը հրաշալիորեն զուգակցում էր հետազոտական պրպտությունը և տասնյակ ձևագրերի համեմատությամբ բնագրեր հրապարակելու տքնանքը: Նրա բնագրագիտական բոլոր աշխատանքներին նախորդել են նպատակասլաց ձևագրագիտական որոնում-դիտարկումները: Բարսեղ Կեսարացու «Վեցարեայի» հայերեն թարգմանության բնագրի լույսընծայումից առաջ նա հետազոտել էր Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող մեկուկես տասնյակ գրչագրերը, նկարագրել դրանք, կազմել ձևագրերի ճյուղագրությունը, ձևագրերի արտասահմանում պահվող ձևագրերի մանրաթափանչները, համադրել հատվածական ընդօրինակությունների և բառարան-մեկնությունների ու պատճառ-լուծմունքների լնձնոթ տվյալները: Տարիների ընթացքում կատարած քննախույզ աշխատանքի արգասիք է նա Գրիգոր Նաղիանզացու «Մամբանական» հրապարակումը: Բարսեղ Կեսարացու մասնական և հուղարկավորության առիթով գրված այդ երկասիրությունը Կ. Մուրադյանն ըստ ամենայնի ոգտագործել է (բնագրով և ռուսերեն թարգմանությամբ) Բարսեղ Կեսարացուն նվիրված իր աշխատություններում և տարիներ անց ի հայտ բերել ու լույս ընծայել նաև հայերեն թարգմանությունը: Ընդհանրապես միջնագրի այդ երեք խոշոր մատենագիրների հարուստ վաստակի հայերեն թարգմանությունները գիտական շրջանառության մեջ մտցնելու առումով Կ. Մուրադյանը եղակի դեմք է հայագիտության մեջ:

Հանգուցյալ հայագետը հոգածությամբ էր վերաբերում իր հրապարակած ամեն մի տողին ու տառին: «Վեցարեայի» բնագիրը կազմելիս նա նկատի է առել ոչ միայն հայերեն ձևագրերի տարընթեցվածքները, այլև մանրակրկիտ աշխատանքով պարզել բազմազան սխալների ու խաթարումների պատճառները, պրպտել ու վերականգնել սկզբնագիր տարբերակները: Հարկ եղած դեպքերում նա դիմել է նաև «Վեցարեայի» թարգմանությունից օգտված մատենագիրների այն երկերին, որոնք «Վեցարեայի» անխաթար հատվածներ են պարունակում: Բնագիրը որքան հնարավոր է կատարյալ տեսնելու մտահոգությամբ նա «Վեցարեայի» հայերեն թարգմանությունը համեմատել է հունարեն բնագրի, ինչպես նաև ռուսերեն ու վրացերեն ղույթ թարգմանությունների հետ: Բնագրագիտական այդ քննախույզ աշխատանքը հնարավորություն է ընձեռել նաև լեզվական ուղղորդվ դիտարկումներ կատարել, նշանակալի իրողություններ արձանագրել, գրաբարի բառարաններում բացակայող բառերի գոյությունը հավաստել, ճշգրտել ու ընդարձակել հանրահայտ բառերի իմաստները:

Վաղ բյուզանդական հեղինակների գործերի հայերեն թարգմանությունները հաճախ ձևաերկի գեր են կատարել մեղանում: Այս առումով անգահատելի է հատկապես Բարսեղ Կեսարացու «Վեցարեայ» և Գրիգոր Նյուսացու «Յաղագս բնութեան մարդոյ» երկերի նշանակությունը: Կ. Մուրադյանի ջանքերին ենք պարտական ոչ միայն այդ հիմնարար աշխատությունների, այլև հիշյալ բյուզանդական մատենագիրների երկերի մեծ մասի հայոց միջավայրում

տարածվելու ողջ ընթացքը պատկերացնելու բացառիկ բարեբախտության համար: Նրա բանասիրական գիտարկումների շնորհիվ բացահայտվել են հայ-բյուզանդական մատենագրական առնչությունների նոր էջեր, լուսաբանվել հայ միջնադարյան գիտական մտքի կազմավորման ակունքները, պարզաբանվել է նաև բուն գործընթացը: Միաժամանակ, շեն մոռացվել բնագրագիտական խնդիրները: Կ. Մուրադյանը բազմաթիվ սրբագրումներ է կատարել այն հայ հեղինակների ևրկերի բնագրերում, որոնք տարբեր ժամանակներում ու զանազան եղանակներով դիմել են բյուզանդական մատենագիրների գրական ու գիտական ժառանգությանը:

Հիրավի պատկանանք է հարուցում հանգուցյալ գիտնականի անտիպ ժառանգությունը: Հայագիտության մեջ առաջին անգամ նա կազմել էր Բարսեղ Կեսարացու «Պահոց գրքի» քննական բնագիրը, այսօր հայտնի ձևագրերի հիման վրա պատրաստել էր Ծղնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» նոր հրատարակությունը, ավարտել էր Ղևոնդի Պատմության գրչագրերի համեմատությունը, որը հիմք կարող էր դառնալ բնագրի ճշգրտված հրատարակության համար: Ընթացքի մեջ էին բազմաթիվ այլ տեքստերի հրատարակության պատրաստման աշխատանքները:

Կ. Մուրադյանի բացառիկ ինքնատիպ խառնվածքի համար բնութագրական էին անձնուրաց նվիրումը, բնատուր համեստությունը և անսահման աշխատասիրությունը: Այդ բարեմասնությունները բխում էին նրա էությունից և նրա առինքնող կերպարի բնութագրական գծերից էին: Այս կապակցությամբ ինչպե՞ս չհիշել գիտնականի կենսագրության եզրափակիչ և հիրավի իրեն արժանի գրվադը: Արհամարհելով օրհասական ցավը, նա մահվանից ընդամենը մի քանի օր առաջ ներկայացավ գիտությունների ակադեմիա՝ ընթերցելու իր վերջին գիտական զեկուցումը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում:

Անխոնջ հայագետի, արժանավոր քաղաքացու և մտաշնորհների պայծառ հիշատակն ընդմիշտ կմնա գործընկերների և նրան ճանաչող բոլոր մարդկանց սրտերում:

Հ. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների բեկեածու

Կիմ Մամբրեի Մուրադյանը տարիներ շարունակ աշխատելով Վերսեր հասարակական գիտությունների ամսագրում, յուրովսանն իր ազնիվ նպատան է բերել նրա հեգինակությանը՝ հայագիտական շրջաններում: Ամսագրի աշխատակիցները և խմբագրական կոլեգիան խոնարհվում են անմոռաց ընկերոջ և անվանի գիտնականի հիշատակի առջև: